ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՆԵՐԲՈՂԸ

Ս. Աստվածածնի լուսավոր կերպարը դարերի ընթացքում ներշնչանքի, ընդօրինակման եւ ոգեւորության աղբյուր է եղել: Ընդհանրական եւ Հայոց եկեղեցիների բազում հայրեր ու վարդապետներ զանազան ճառեր, մեկնություններ, ներբողներ, քարոզներ են ձոնել Տիրամորը՝ արժեւորելով նրա տեղն ու դերը փրկագործության մեջ, պերճախոս մակդիրներով գովերգելով նրա անսահման խոնարհությունն ու գեղեցկությունը, նրա մեջ տեսնելով ճշմարիտ մորը եւ ամենամեծ բարեխոսին, որ անսաց Աստծո ձայնին ու երբեք չերկնչեց:

Հայ եկեղեցական մատենագրությունը, լինելով համաքրիստոնեական գրական ժառանգության անբաժան մասերից մեկը, հարուստ է Ս. Կույսին նվիրված ստեղծագործություններով: Հայ նշանավոր վարդապետներ եւ մատենագիրներ Պետրոս Սյունեցին (Զ. դ.), Թեոդորոս Քռթենավորը (Է. դ.), Ս. Գրիգոր Նարեկացին (Ժ.-ԺԱ. դդ.), Ներսես Լամբրոնացին (1153-1198), Ս. Գրիգոր Տաթեւացին (1346-1409), Առաքել Բաղիշեցին (†1454), Պետրոս արք. Բերդումյանը († 1787) եւ ուրիշներ առանձին երկեր են նվիրել Աստվածամորը՝ հարստացնելով եւ բյուրեղացնելով Հայոց Եկեղեցու մարեմաբանությունը:

Ս. Կույսին նվիրված անտիպ երկերից է ԺԳ.-ԺԴ. դդ. նշանավոր րաբունապետ Կիրակոս Երզնկացու ներբողը, որում այս անգամ ընթերցողի առաջ բացահայտվում է բանաստեղծ վարդապետը՝ կրկին Ս. Գրքի, հայրաիտսական աղբյուրների քաջիմացությամբ եւ քնարական ոգով: Կիրակոսի այս երկը Տիրամորն ուղղված մի մաղթանք-հայց է՝ «ի բարեխօսութիւն ամենայն մեղաւորաց»: Ներբողը հայոց այբուբենի տառերով ծայրակապ է՝ բաղկացած 37 տնից, որում հեղինակը հանվանե հիշատակում է նաեւ իրեն: Այն մեզ է հասել ձեռագիր երկու ընդօրինակությամբ[1]: Օգտվելով եւ շարունակելով արեւելաքրիստոնեական մարեմաբանության հարուստ ավանդները՝ Կիրակոս Երզնկացին զանազան մակդիրներով գովերգում է Աստվածամորը՝ նրան անվանելով. «Տաճար եւ տախտակ Բանի, Գաւազան բողբոջեալ, Դուռն փակեալ, Ամպ թեթեւ եւ լուսածին, Խորան, Ղամբար եւ Տաճար լուսոյ, Ծառ կենաց, Սափոր ոսկի, Էին Աթոռ եւ Բնակարան» եւ այլն: Անշուշտ, ներբողի այս համեմատություններում զգացվում է Ս. Աստվածածնին

1 Տե՛ս Վենետիկի Մխիթ. մատ. ձեռ. Հմր 258/752, ԺԲ.-ԺԳ. դդ., թ. 143ա-144բ. նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», յօրինեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 800-801: Երուսաղեմի մատենադարան, ձեռ. Հմր 939, էջ 138-140. նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հ. Գ., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1968, էջ 486-493: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Երուսաղեմի հայոց պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արք. Մանուկյանին օրհնության եւ թույլտվության, ինչպես նաեւ Տ. Շնորհք աբդ. Պալոյանին, որ լուսանկարեց եւ մեզ ուղարկեց ներբողի թվային տարբերակը:

նվիրված շարակաների եւ Աստվածաշունչ մատյանի համապատասխան տեղիների ազդեցությունը:

Կիրակոսը դիմում է Տիրամորը՝ բարեխոսելու Միածին Որդու մոտ իր եւ մյուսների բազում մեղքերի համար, լուսավորելու եւ նորոգելու իրեն, ազատելու գեհենի տանջանքներից եւ երկնային պսակին արժանացնելու: Չնայած ներբողի հեղինակ Կիրակոս վարդապետը գիտակցում է իր մեղավոր լինելը, բայց նաեւ վստահ է, որ Տիրոջ ողորմությամբ եւ Ս. Կույսի բարեխոսությամբ կարող է փրկվել, քանզի Աստվածածինն է քերովբեներից ու սերովբեներից վեհագույնը, որ ծնել է աշխարհի Փրկչին եւ իր բազուկներով գրկել Նրան:

Բնականաբար ներբողում Կիրակոս բաբունապետն անդրադառնում է նաեւ մարեմաբանական կարեւոր սկզբունքների եւ աստվածաբանական ընկալումների, որոնք առավել չափով արդեն իսկ բացատրված են Եկեղեցու հայրերի համաբնույթ երկերում: Կիրակոսը, եւս մեկ անգամ շեշտելով Մարիամի «Աստվածածին» լինելը, նշում է, որ Փրկչի ծնունդամբ նա վերացնում է նախապատեղծի՝ Եւայի անեծքը: Նա էր այն ընտրյալ անոթը, որ Ս. Հոգու իջմամբ մաքրվեց՝ նախապատրաստելու համար Տիրոջ անապական ծնունդը: Ուստի Աստվածածնին վերապահված այս կարեւոր առաքելությունը նրան վեր է դարձնում անգամ հրեշտակների դասերից:

Ամբողջ ներբողում ընդգծվում է հատկապես Ս. Աստվածածնի բարեխոսական առաքելությունը մարդկության պատմության մեջ: Այդ պատճառով Կիրակոսն անընդհատ խնդրում է, որ մայրերի Մայրը բարեխոսի իր համար:

Կիրակոս Երզնկացու այս երկի հրապարակման նպատակն է՝ եւս մեկ միավորով ամբողջացնել եկեղեցական այս գործչի մատենագրական ժառանգությունը:

* * *

Բնագիրը նույնությամբ ներկայացնելու համար ուղղագրությունը, երկգրությունները թողել ենք նույնը եւ բացել բոլոր հապավումները: Տերունական անունները եւ նրանց փոխարինող դերանունները ներկայացրել ենք մեծատառով՝ առավել հստակ եւ ճշգրիտ դարձնելու համար նախադասությունների իմաստները: Անհրաժեշտության դեպքում մեր կատարած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []:

Բնագիրը հրատարակվում է առաջին անգամ: Ստորեւ տալիս ենք ձեռագրի նկարագրությունը:

Երուսաղեմի ձեռ. Ն՝մր 939, Ժողովածոյ, էջ 138-140, 1621 թ., վայր՝ Առաքելոց վանք, Մուշ: Գրիչ, ստացող՝ Գրիգոր Երէց Նչեցի, թերթ՝ 682, թուղթ՝ 20x14x5, գիր՝ այլազան:

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԱՐԱՐԵԱԼ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻԻ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՄԵՂԱՒՈՐԱՑ

Ասպուածածի՛ն, փաճա՛ր Բանին,
բարեխօսեա՛ Քո Միածնին,
ո՛չ մատնել զիս գեհենին,
ո՛չ ի խաւար արգելանին:

Բանին փախտակ Դու անձնաւոր,
Գեղմն իմանալի Դու երկնաւոր,
սուրբ աղօթիւք զօրաւոր,
մաղթեա՛ վասն իմ յօրն ահաւոր:

Գաւազանն բողոքոջեալ,
յարմէն Յեսեա ի Քեզ ծաղկեալ,
յեռեա՛ զիս յորթն մշակեալ,
ի յերկնաւոր Հօրէն սրածեալ:

Դուռն փակեալ Դու անուանեալ,
ընդ որ Անտեսն յէից մտեալ,
մո՛ւծ զիս առ դուռդ կոչեցեալ,
Հովիւ խաշանց ի Քէն ծնեալ:

Երանեալ յազգս ամենայն,
Էին Աթոռ եւ Բնակարան,
զիս մի՛ թողուր լինել նման,
որք կորստեան վիճակեցան:

Զարդարեալ շնորհօք Հոգոյն,
տուն եւ տեղի իջման Որդոյն
զիս ազատեա՛ ի թշնամոյն
եւ նուիրեա՛ Քում սիրելոյն:

Էակիցն Հօր Որդին,
Քեզ, անդրանիկ եւ միածին,
զիս ի ժանեաց կորգեա՛ չարին,
միջնորդ կենաց մեզ երկնային:

Ընտրեալ յառաջ ի սկզբանէ,
մաքրեալ Հոգով յորովայնէ,
այլ ես խոտան միշտ ի բնէ,
Սուրբ Տիրուհի զիս նորոգէ:

Թագաւորին երկնաւորի,
Խորան լուսոյ եղեր յերկրի,
զբարեաց թափուրս յամենայնի,
մի՛ գեհենին առներ լուցկի:

Ժառանգն Հօր եւ ծոցածին,
Քեզ, անդրանիկ եւ միածին,
եթէ կամիս Քեզ է դիւրին,
զիս ազատել յօրն ահագին:

Ի քերովբէս բազմեալ Բանին,
եղեր ծնաւղ եւ աղախին,
լուծեր զանէծս նախասպեղծին,
զտերեւապատն ի խանձարրին:

Լուսաւորեա՛ զիսաւարս անձին,
լո՛յծ զիսաւարն սկզբնածին,
զմեղս մաքրեա՛ իմոյ անձին,
որ քան զաւազ շատ է զծովին:

Խորան լուսոյ, Աթոռ Էին,
բարձօղ բազկօք Հօր Էակցին,
զանկեալս ի խորս անդընդային,
վերաբերեա՛ ընդ Քեզ յերկին:

|139| Ծառ կենաց, Ասպուածածի՛ն,
տնկեալ ի մէջ Աղին դրախտին,
անմահական պտղով Քոին
կերակրեցեր զազգս երկրածին:

Կիրակոս պետս յետին,
եւ զառաձեալ մեղօք կրկին,
զերեսս եղեալ առ հոմազգին,
հայցեմ ի Քէն, ծնօ՛ղ Փրկչին:

Հացիդ կենաց եւ երկնային,
ելեալ յերկրէդ ասպուածային,
հաղորդս արա՛ զիս վերստին
եւ կայլակաց արեան կողին:

Զայն աւետեաց Գաբրիէլին,
Քեզ բարբառէր զցնծալին,
ուրա՛խ լեր ծնօղ Փրկչին,
բերկրեա՛, փաճար Հօր Միածնին:

Ղամբար լուսոյ, Ասպուածածի՛ն,
ծնար մարմնով զԼոյսն առաջին,
Դու բարեխօս մարդկան ազգին,
որք հաւատան Քո Միածնին:

Ճառագայթ փառաց Էին,
յորմէ սարսեալ սերովբէին,
ի Քեզ բազմեալ ըստ քերովբէին,
կրեցեր ի գիրկ զԱնտանելին:

Մի՛ դադարեր, Աստուածածի՛ն,
բարեխօսել վասն իմ անձին,
առ Որդիդ Քո Միածին,
ջնջել զգիր իմոյ պարտին:

Յառաջագոյն տեսանողին,
Հոգով գոչէր զխորհուրդ Քոին,
Ամպ թեթեւ եւ լուսածին,
զՔեզ անուանեալ ամովսածնին:

Նստեալն ընդ Հօր յաթոռ փառաց,
բազմիլ ի գիրկ Կուսիդ տենչաց,
Քեւ յԵգիպտոս փա[խ]եաւ գնաց,
փախոյց զխաւարն թանձրամած:

Շարժեալ զբագինսն կործանեաց,
զԲելիարա[յ] գունդն վանեաց,
զամբիծ հաւատսն անդ սերմանեաց
Աստուած ընդ Հօր զԻնքն յայտնեաց:

Որպէս յայնժամ հրաշագործեաց,
զնոյնն Եսայի նախ գուշակեաց,
եկեալ Որդին Քո կատարեաց,
զեգիպտացոց դիսն փշրեաց:

Չունիմ մի մասն ես ի բարեաց,
զոր մեզ Ո[ր]դին Քո քարոզեաց,
այլ ընդունակ եղէ չարեաց,
զոր թշնամին յիս սե[ր]մանեաց:

Պայծառ նման արուսեկին,
մայր Տեառն եւ Կոյս Աստուածածին,
ծունր կրկնեա՛ Քո Միածնին,
զիս ոչ մատնել չար վիշապին:

Ջահ լուսոյ գեր քան զարփին,
ծնօղ Որդոյ Հօր անդրանկին,
ելիցն յերկրէս իմ ի յերկին,
լե՛ր առաջնորդ ճանապարհին:

|140| Ռահ լուսոյ, Սո՛ւրբ Տիրուհի,
կազմեա՛ հոգոյս բազմամեղի,
չար իշխանն խաւարի
ի գալն իմում պապանձեսցի:

Սրբութեանց սուրբ հորջորջեալ,
նոր տապանակ հոգով լցեալ,
մո՛յծ զիս առ Տէրն ի Քէն ծնեալ
կենագործել զհոգիս մեռեալ:

Վեհագոյն քերովբէից,
յորում բազմի Ստեղծօղն էից,
ի յօր մահուան իմոյ ելից,
մեղուցելոյս լե՛ր կարէկից:

Տաճար լուսոյ Աստուածածի՛ն,
Սափոր ոսկի մանանային,
յանձն արա՛ զիս իմ հրեշտակին,
անզրգուելի հանել յերկին:

Որախարար ազգի մարդկան,
պտղովդ ի Քէն անմահութեան,
զիս փշրանաց արա՛ արժան
կենաց Հացիդ, որում[1] բաղձամ:

Ցնծնութեան աւետարեր,
զանէծս նախնոյ մօրն լուծեր,
ջնջեա՛ զմեղաց իմոց մթեր,
քան զաւազ ծանր առ ծովեզեր:

Իւթեղէն մարմնով ելեր,
քան զամենայն երկինս գեր,
զիս յանգմանէ կագնեա՛ ի վեր,
չար գազանին մի՛ տար զիս կեր:

Փառաւորեալ մայր Տեառն եւ Կոյս,
ազգի մարդկան պարծանք եւ յոյս,
լե՛ր ձեռնտու մեղուցելոյս,
առ Քո Որդին ած զիս ի լոյս:

Քերովբէիցն վեհագոյն,
յաթոռ նստեալ յաջմէ Որդոյն,
հաղորդս արա՛ զիս սեղանոյն,
զոր խոստացար յառաջագոյն:

Ես՝ եղկելիս մտօքս ի քուն,
հոգով թըմբ[ր]եալ եմ, չեմ արթուն,
երկիրպագեմ Սուրբ Տիրուհուն,
զարթուցանէ ի տես Իւր Որդոյն:

---

1 Բնագրում՝ ուրում: